



9 (193). ԼԵԶՈՒՆ

Մարդ մե նստեր կաներ, չեղներ մտներ՝ թագավորին կը քֆրեր:

— Մեր թագավորն էջ է, թագավորի կնիկ-ճիժ, թագավորի ֆլան-րնֆան: Ձեն կերթա հասնի տեղ, թագավորն զմարդ կը կանչե:

— Մա՛րդ,— կըսե,— չորի՞ն ընձի կանպատվիս:

— Թագավո՛ր ապրած,— կըսե,— մորութ հմալ իմ էղի, ինչ կէնիմ-չէնիմ՝ լեզու չըմ կոնա վրես պահի:

Թագավոր կըսե.

— Ընձի ասեղ մե բերեք:

Ասեղ կը բերին, թագավոր կառնե, ղմարդու լեզուն քանիմ տեղով կը ծակծկե, արուն կը լցվի բերան:

— Դե՛,— կըսե,— գնա՛, քանի սաղ իս՝ չըս մո՛ռնա:

Կըսին՝ էդ օրվընե մարդն էլ ամբողջ-ղամբախ չը խոսա, գիմնա օր՝ մարդու չըմնու մեծ դուշմանն՝ ուր լեզուն է:

